ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» մայիսի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N69-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2013 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումներն Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչ հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2013 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N69-Ա որոշման կատարմամբ։

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների 2013 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքներն ու զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները։

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 71 ընկերություններից 2013 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 55 ընկերություններ (78%), որոնց զուտ շահույթը կազմել է 434121.0 հազ. դրամ, վնասով են աշխատել 14 ընկերություններ (20%), որոնց համախառն վնասը կազմել է 1051500 հազ. դրամ (միայն «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի վնասը կազմել է 722030.0 հազ. դրամ) և մեկ ընկերություն ներկայացրել է 0-ական արդյունք։ Նշված 71 ընկերություններից «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքները Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N532-Ա որոշմամբ հանձնվել են հավատարմագրային կառավարման «Մեդիքալ Ինվեստ» ՍՊԸ-ին։

Համաձայն հիշյալ որոշման 3-րդ կետի գ) ենթակետի՝ շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը վերապահված է հավատարմագրային կառավարչին:

Երևանի 2014 թվականի բյուջեով նախատեսված կազմակերպությունների տրամադրության տակ մնացած շահույթից կատարվող մասհանումներից 94464.0 հազ. դրամ եկամուտների փոխարեն փաստացի ցուցանիշներով Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների գումարը կկազմի 149896.8 հազ. դրամ (աճ 58.7%): Թվով 10 ընկերությունների («Սուրբ Աստվածածին» ծննդատուն», «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 5 պոլիկլինիկա», «Թիվ 12 պոլիկլինիկա», «Թիվ 20 պոլիկլինիկա», «Արշակունյաց պոլիկլինիկա», «Երևանի Ավտոբուս», «Արաբկիր-Կամար», «Արաբկիր-Սերվիս», «Շենգավիթ-կանաչապատում») զուտ շահույթներից՝ 59379.0 հազ. դրամից շահութաբաժին չի հաշվարկվում, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի հիմքով այդ ընկերությունների մոտ առկա են շահութաբաժինների վճարման սահմանափակումներ՝ զուտ ակտիվների արժեքը պակաս է կամ կպակասի կանոնադրական կապիտալից շահութաբաժինների վճարման հետևանքով։

Այլ հիմնադրամներին հատկացումները կատարվել են հաշվի առնելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթները և կազմակերպությունների առաջարկությունները։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2013 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2013 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«--------» ---------- 2014թ.
N ---------- Ա որոշման

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2013 թվականի տարեկան զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2013 թվականի տարեկան զուտ շահույթ	Համայնքի մասնակցության շահութաբաժին	Պահուստային կապիտալ	Սպառման հիմնադրամ	Այլ	Վնասների նվազեցում
1	«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ	144123.0	57649.2	28825.0	28825.0	28823.8	
2	«Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	1790.0	716.0	537.0	537.0		
3	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲԸ	10863.0	4345.2	543.2	3000.0	2974.6	
4	«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն» ՓԲԸ	90.0	36.0	54.0			
5	Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ-Ի «Նոր Արաբկիր» ԱԿ» ԴՓԲԸ	1445.0	578.0	72.2	794.8		
6	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	6831.0	2732.4	3000.0	1098.6		
7	«Ն.Բ.Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	24.0	9.6	14.4			
8	«Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ	6243.0					6243.0
9	«Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ	98.0	39.2	58.8			
10	«Քաղաքային Էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	309.0	123.6	185.4			
11	«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	2022.0					2022.0
12	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	9.0	3.6			5.4	
13	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	108.0					108.0
14	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	2302.0	920.8	381.2	1000.0		

15	«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ	4750.0					4750.0
16	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	761.0	304.4			456.6	
17	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	134.0	53.6	80.4			
18	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	3929.0	1571.6	196.4		2161.0	
19	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	514.0	205.6			308.4	
20	«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ	455.0					455.0
21	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	780.0	312.0	300.0		168.0	
22	«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	990.0	396.0	297.0		297.0	
23	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	39.0	15.6	23.4			
24	«Սարի թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	3865.0	1546.0	1159.0		1160.0	
25	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	6147.0					6147.0
26	«Նոր Արեշ» պոլիկլինիկա» ՓԲԸ	101.0	40.4				60.6
27	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	8.0	3.2		4.8		
28	«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ	31892.0					31892.0
29	«Երևանտրանս» ՓԲԸ	5264.0	2105.6			3158.4	
30	«Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ	14854.0	5941.6		6000.0	2912.4	
31	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	1951.0	780.4	97.0	601.0	472.6	
32	«Երևաննախագիծ» ՓԲԸ	14316.0	5726.4	715.8	7873.8		
33	«Քաղաքաշինություն» ՓԲԸ	28194.0	11277.6		14097.0	2819.4	
34	«Նոր բարեկարգում» ՓԲԸ	1206.0	482.4			723.6	
35	«Երքաղլույս» ՓԲԸ	105367.0	42146.8			63220.2	
36	Ջրային կառույցների ՓԲԸ	4314.0	1725.6				2588.4
37	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	3286.0	1314.4	500.0	1000.0	471.6	
38	«Զևավորում» ՓԲԸ	256.0	102.4				153.6

39	«Մաքուր Աջափնյակ» ՓԲԸ	704.0	281.6			422.4	
40	«Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ	30.0	12.0	18.0			
41	«Աջափնյակ-կանաչապատում» ՓԲԸ	861.0	344.4	150.0		366.6	
42	«Ավան- կանաչապատում» ՓԲԸ	1968.0	787.2			1180.8	
43	Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» ՓԲԸ	49.0					49.0
44	«Արաբկիր-Սերվիս» ՓԲԸ	4234.0					4234.0
45	Երևանի «Արաբկիր նախագիծ» ՓԲԸ	12.0	4.8	7.2			
46	«Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ	1627.0	650.8	50.0	450.0	476.2	
47	Էրեբունի թաղային համայնքի «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ	6486.0	2594.4			1134.6	2757.0
48	«Կենտրոն-կանաչապատում» ՓԲԸ	2480.0	992.0			1488.0	
49	«Անխափան վերելակ» ՓԲԸ	708.0	283.2		424.8		
50	«Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ	1190.0	476.0			714.0	
51	Երևանի Նորք-Մարաշի թաղային համայնքի «Կանաչ բարձունք» ՓԲԸ	289.0	115.6	80.0		93.4	
52	«Նուբարաշեն» ՓԲԸ	30.0	12.0	18.0			
53	«Շենգավիթ-կանաչապատում» ՓԲԸ	3479.0					3479
54	«Երթաշարժ» ՓԲԸ	24.0	9.6			14.4	
55	«Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ	320.0	128.0	96.0		96.0	
	ԸՆԴԱՄԵՆԸ	434121.0	149896.8	37459.4	65706.8	116119.4	64938.6